ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 25 2022 № 2

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ИСТОРИЯ
HISTORY

ՀՏԴ՝ 93/94
DOI: 10.52971/18294316-2022.25.2-155

ԵՐՎԱՆԴ ՎԵՐՋԻՆԻ ՏՈՀՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Լուսինե Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Բանալի բառեր՝ *Երվանդունի, Օրոնտես, թագավոր, քրմապետ, Տիր, Տիրիբազ, Հյուդարնես, Աքեմենյան, հայկական, պարսկական։*

Հոդվածում քննարկվում են Երվանդ Վերջին թագավորի ծագումնաբանության վերաբերյալ անտիկ աղբյուրների և հայ պատմիչների երկերում պահպանված տեղեկությունները։ Ցույց է տրվում, որ Երվանդ Վերջինը ոչ թե հայրական, այլ մայրական գծով է Երվանդունի արքայատոհմին պատկանել։ Հակառակ մեր պատմագրության մեջ ժամանակին իշխած կարծիքի՝ Երվանդ Վերջինին փոխարինած Արտաշես 1-ինն է հայրական գծով նախկին արքայատոհմին (այսինքն՝ Երվանդունի /Հայկազանց տոհմին) պատկանել, ինչը ուղղակիորեն վկայված է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ։

Նախաբան. Գրավոր առաջին տեղեկությունը Երվանդ Վերջին թագավորի ծագումնաբանության վերաբերյալ տալիս է հայտնի հույն աշխարհագետ Ստրաբոնը։ Նա մինչարտաշիսյան Հայաստանի առթիվ գրել է «Վերջին իշխողն էր Օրոնտեսը՝ շառավիղն Հյուդարնեսի, որ մեկն էր յոթ պարսիկներից»։[1] Երկրորդ տեղեկությունը տալիս է մեր Պատմահայրը՝ նախ գրելով. «Երուանդ ոմն՝ որդի կնոջ Արշակունւոյ, թագաւորէ յութերորդ ամի Դարեհի վերջնոյ», ապա ավելացնում է «Եւ ունին զրոյցք յաղագս նորա այսպէս։ Կին ոմն յազգէ Արշակունեաց… ծնանի երկուս մանկունս յանկարգ խառնակութենէ, որպէս Պասիփայէ զՄինոտովրոս։ Եւ ի զարգանալն մանկանցն կոչեն անու-

[1] **Ստրաբոն -1940,** http://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1260110000

անս Երուանդ և Երուազ»:[2] Խորենացու հաղորդման առաջին մասը վերաբերում է Գավ-գամելայի ճակատամարտում (մ.թ.ա. 331 թ.) Աքեմենյան արքայից-արքա Դարեհ Վեր-ջինի բանակում հայկական զորամասով հանդես եկած Հայաստանի սատրապ, ապա և թագավոր Օրոնտես/Երվանդին, իսկ երկրորդ մասը՝ մինչարտաշիսյան Հայաստանի վերջին թագավոր Երվանդ Վերջինին[3] (մ.թ.ա. 222-201թթ.): Ինչպես պարզորոշ երևում է, Ստրաբոնի և Խորենացու հաղորդումների համընկնման կետը Երվանդ Վերջինի՝ հայ-բական գծով ոչ հայկական ծագում ունենալու մեջ է:

1. Հայոց քրմապետ Տիրիբազի մասին

Ստրաբոնի հաղորդման մեջ Հայոց Երվանդ Վերջին թագավորը Հյուդարնեսի *շառավիղ* համարվում է ոչ պատահական, քանի որ նրանց միջև շուրջ 200 տարվա ան-ջրպետ գոյություն ունի: Եթե այդպես է, ապա Հայոց այս թագավորի և Դարեհ 1-ինի զի-նակից պարսիկ մեծատոհմիկ Հյուդարնեսի (պարս.՝ Վիդարնա) միջև գոյություն ունե-ցած ազգակցական շղթայի մի քանի օղակներից մեկը կապված էր լինելու Հայաստանի և հայության հետ, այսինքն՝ Հյուդարնեսի հետնորդներից մեկը ապրած պետք է լիներ Հայաստանում և դարձած լիներ Հայոց Երվանդ Վերջին թագավորի նախնին: Մեր կար-ծիքով, դա եղել է այն մեծատոհմիկ պարսիկ անձնավորությունը, որին է պատկերում Արին-բերդից (Էրեբունի) հայտնաբերված աքեմենյան դարաշրջանի արծաթե պտյակի հեծյալի քանդակը (տե՛ս նկ. 1):[4]

Նկ. 1

Սրա գլխանոցը նույնն է պարսիկ արքայից-արքաների թիկնազորի քրմական դասը ներկայացնող զինվորի հետ (ի տարբերություն զինվորական դասը ներկայացնող զինվորի) (տե՛ս նկ. 2)[5], ինչպես նաև մեծատոհմիկ պարսիկ քրմի գլխանոցի հետ (տե՛ս նկ. 3-ի աջակողմյանը)[6]: Որ պտյակի հեծյալի քանդակը ներկայացնում է արևապաշտ քուրմ-աստծու, ցույց են տալիս նրա գլխանոցին պատկերված արծիվը[7] և նրա հեծած ձին[8]: Դրանք խորհրդանիշներն էին Արևի աստծու՝ քուրմ աստծու[9]: Մենք կարծում ենք նաև, որ սա Երվանդ Վերջինի քուրմ նախնին է՝ մ.թ.ա. 5-4-րդ դդ. սահմանագլխին Քսենոփոնի «Անաբազիս»-ում հիշատակված «Արևմտյան Արմենիա»-ի հյուպարքոս Տիրիբազը[10]:

---

[2] **Խորենացի -1981,** գիրք Բ, գլ. լէ:
[3] **Տիրացյան Գ. -1958,** թիվ 6, էջ 66-68:
[4] **ՀԺՊ -1971,** էջ 461-ի նկարը: **Քսենոփոն** -1970 էջ 176-177-ի ներդիր նկարը:
[5] **Дандамаев М. -1985.** с.. 215, рис. 12.
[6] **Քսենոփոն -1970,** էջ 48-49-ի ներդիր նկարը:
[7] **Հմայակյան Ս. -1990,** էջ 45:
[8] **Քսենոփոն -1970,** էջ 98, 262, ծան. 26: **Հմայակյան Ս. -1990,** էջ 4: **Իսրայելյան Մ. -1971,** էջ 73:
[9] **Гамкрелидзе Т., Иванов В. -1984,** т. 2, с.с. 793-794.
[10] **Քսենոփոն -1970,** էջ 93:.

Նկ. 2

Նկ. 3

Մինչև Տիրիբազի անձին ու գործունեությանն անդրադառնալը խոսենք այնպիսի երևույթի մասին, որը կարելի է որակել որպես քրմապետի «արքայական կարգավիճակ»: Արտաշիսյան դարաշրջանի Հայաստանում Տոսպ-Վանը լայն ինքնավարություն ուներ, որի վկան նրա կառավարչի կրած «արքա» տիտղոսն էր: Դրանցից մեկն իր թողարկած դրամի մակագրության մեջ իրեն կոչում է «Տոսպի Միհրդատ արքա»:[11] Քանի որ Վանի (և նրա Տոսպ գավառի) իշխող Միհրդատի նման սեփական դրամ հատելու իրավունք ուներ նաև Տիրիբազը՝ պահպանվել են նրա անվամբ թողարկված մի շարք արծաթե դրամներ[12], ուրեմն նա ևս եղել է «արքայական կարգավիճակ» ունեցած քուրմ արքա, ավելի ճիշտ՝ քրմապետ:

Հին Հայաստանում քրմապետը պետության երկրորդ դեմքն էր համարվում, իր հզորությամբ (ուներ սեփական զինված ուժեր, ենթակա քրմություն) և հարստությամբ (անձնական ու քրմական տիրույթներ) քիչ էր զիջում թագավորին:[13] Երբ դրանց հավելվում էր նաև երկրի հոգևոր կյանքում նրա ունեցած կարևորագույն դերը, քրմապետը դառնում էր թագավորին հավասար անձնավորություն: Արմավիրը նստավայր ունեցած Երվազ քրմապետի (գահանունը՝ Միթրաս)՝[14] Երվանդ Վերջինի (գահանունը՝ Էբրոնտես)[15] եղբոր համար Հ. Մանանդյանը գրում է, որ այս «քուրմը գտնվում էր թագավորին համարյա հավասար աստիճանում (նա իրեն անվանում է βασιλεύς), ցույց է տալիս Արմավիրի թիվ 4 հունարեն արձանագրությունը, որը քրմապետ Միթրասի նամակն է Էբրոնտես թագավորին»[16]: Հունարեն βασιλεύς նշանակում է «արքա, թագավոր»:

[11] **Խուրշուդյան Է. -1998,** XVII, էջեր 167-174:
[12] **Մուշեղյան Խ. -1983,** էջեր 18-21:
[13] **Կրկյաշարյան Ս. -2005,** էջ 133:
[14] **Մանանդյան Հ. -1946,** էջեր 19, 29:
[15] **Պետրոսյան Ս. -2006,** էջ 334:
[16] **Մանանդյան Հ. -1946,** էջ 29:

Ճիշտ է, Քսենոփոնը Տիրիբազին ոչ թե որպես քրմապետ է հիշատակում, այլ որպես հյուպարքոս։ *Հյուպարքոս* բառը հունարեն է, նշանակում է «օգնական, կառավարիչ, փոխարքա»[17], որ Հայաստանում պիտի համապատասխաներ երկրի երկրորդ դեմքը համարված պաշտոնյայի կարգավիճակին։ Այդպիսին, ինչպես Հայաստանում, այնպես էլ հարևան երկրներում[18], սովորաբար, քրմապետն էր լինում։ Բնականաբար, Տիրիբազի գործունեությանը ոչ թե կրոնական, այլ պաշտոնական հարցերով առնչված լինելով՝ Քսենոփոնը չէր կարող իմանալ, որ Տիրիբազի անունն արդեն խոսում է նրա քրմապետ լինելու մասին, որովհետև նրա առաջին բաղադրիչը Տիր քուրմ աստծու անունն է՝ ընտրված գահանուն։ Այս տեսանկյունից ուշագրավ են Տիր աստծուն և նրա մեհյանին Ագաթանգեղոսի երկում տրված բնութագրումները՝ առկա այդ մեհյանի, իբրև թե Տրդատ 3-րդի կողմից ավերելու նկարագրության հետևյալ հատվածում. «Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ երթալ յԱրտաշատ քաղաք… Նախ դիպեալ ի ճանապարհի *երազացոյց երազահան պաշտաման Տրի դից՝ դպրի գիտութեան քրմաց, անուանեալ Դիւան գրչի՝ Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան*. Նախ ի նա ձեռն արկեալ՝ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին»։[19]

Ըստ Քսենոփոնի՝ Հայաստան մտած հույն վարձկանների ավելի քան 10.000-անոց բանակը մ.թ.ա. 401-400 թթ. ձմռանը հասել էր «մի վայր, որը կոչվում էր Արևմտյան Արմենիա։ Նրա հյուպարքոսն էր Տիրիբազոսը, որը լինելով արքայի (իմա՛ Արտաքսերքսես 2-րդի – Լ.Պ.) բարեկամը, երբ ինքն էր ներկա գտնվում, ուրիշ ոչ ոք արքային ձի չէր նստեցնում»։[20] Սա վկայություն է Տիրիբազոսի՝ մեծատոհմիկ պարսիկ լինելու մասին։ Տիրիբազի ազգությունը և բարձր ծագումը երևում է նաև վարձկաններին գերի ընկած պարսիկ զինվորի հաղորդումները վերարտադրող դրվագում։ Սա «կրում էր պարսկական աղեղ, կապարճ և երկսայրի սակր, ինչպես ունեն ամազոնուհիները։ Երբ սրան հարցրին, թե որտեղացի է, պատասխանեց, թե պարսիկ է ու գալիս է Տիրիբազոսի բանակից՝ պաշար վերցնելու համար։ Հելլենները հարցրին նաև, թե ինչքա՞ն է զորքը և ի՞նչ նպատակով է հավաքված։ Նա ասաց, որ Տիրիբազոսն է, որն ունի և՛ իր զորքը, և՛ վարձկան խալյուբներ ու տառխներ»։[21]

«Արևմտյան Արմենիա»-ի գավառը, որտեղ որ Տիրիբազը հանդիպել է հույներին, Տարոնն[22] էր՝ հայտնի իր քրմապատկան (ավելի ուշ՝ կաթողիկոսական) հարուստ կալվածքներով։[23] Դրանք ավերածություններից փրկելու մտադրությամբ նա դիմել էր բանակցությունների։ Ըստ Քսենոփոնի՝ հույն զորավարներին «նա ասաց, թե ցանկանում է պայմանավորվել, որպեսզի ոչ ինքը վնասի հելլեններին, ոչ էլ նրանք այրեն տները, իսկ

[17] **ДРС -1958,** 2, с. 667.
[18] Տե՛ս **Կրկյաշարյան Ս. -2005,** էջեր 129-151։
[19] **Ագաթանգեղոս -1983,** ՃԸ. 777։ Տիրի՝ քուրմ աստված լինելու վերաբերյալ տե՛ս նաև **Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ. -2000,** էջեր 82-83։
[20] **Քսենոփոն -1970,** էջ 93։
[21] Նույն տեղում, էջ 94։
[22] Հմմտ. **Քսենոփոն -1970,** էջ 93 և էջ 260, ծան. 17։
[23] **Պետրոսյան Ս. -2020,** էջեր 75, 79-80, **Պետրոսյան Ս. -2006,** էջեր 220-222։

պարեն կարող են վերցնել, ինչքան անհրաժեշտ է: Զորավարները համաձայնվեցին այդ բոլորին և այդպիսի պայման կնքեցին»:[24] Տիրիբազն իրավունք ուներ այդպիսի քայլի դիմելու, որովհետև քրմապետ լինելով, նաև Արիևի աստծու քուրմ էր: Հայտնի է, որ Առաջավոր Ասիայի երկրներում Արևի անձնավորում աստվածները՝ UTU, Շամաշ, Շիվինի, Միթրա/Միհր և նրանց երկրային մարմնավորում քրմերը համարվում էին իրավական ոլորտի բոլոր գործառույթների տնօրինողները: Նրանք էին երդման և տարատեսակ պայմանավորվածությունների, պայմանագրերի նախաձեռնողները, դրանց վկաները և պահպանման երաշխավորները:

Վերևում խոսք եղավ Արին բերդից հայտնաբերված արծաթե պտյակի մասին, որին քանդակված հեծյալ անձը, Արևի աստծու բարձրաստիճան քուրմ լինելով, կարող էր պատկերել հայոց քրմապետին: Այս տեսանկյունից ուշագրավ է Տիրիբազի՝ արծաթի նկատմամբ ունեցած և Քսենոփոնի աչքից չվրիպած հակումը: Երբ հույն վարձկանները Տիրիբազին հանկարծակիի բերելով հարձակվեցին նրա կայանի վրա, «բարբարոսները աղմուկը լսելով, չդիմացան ու փախան, բայց բարբարոսներից ոմանք սպանվեցին, և ձեռք բերվեց մոտ քսան ձի, միաժամանակ գրավվեց Տիրիբազոսի վրանը և նրա մեջ *արծաթե ոտքերով մահիճներ և ըմպանակներ*, ինչպես նաև մարդիկ, որոնք ասացին, թե հացարարներ են ու մատռվակներ»:[25]

Տիրիբազը Աքեմենյան տոհմից չէր, բայց որպես Հյուդարնեսի սերունդ արտոնյալ էր, որովհետև նրա նախնին մյուս հինգ պարսիկ մեծամեծների հետ Դարեհ 1-ինի հավատարիմ զինակիցներից էր՝ Գաումատայի սպանության մասնակիցը և Դարեհի դեմ բարձրացրած ապստամբությունները ճնշողներից մեկը: Տիրիբազն էր լինելու Հյուդարնեսին Երվանդ Վերջինի հետ կապող ազգակցական օղակը: Տիրիբազը Օրոնտաս սատրապի հետ միասին մոտ հինգ տարի (մ.թ.ա. 383թ. սկսած) պատերազմ էր մղում Աքեմենյաններին չհնազանդված Կիպրոսի Էվագորաս արքայի դեմ[26]: Օրոնտեսի նոր պաշտոնավարումները Փոքր Ասիայի արևմուտքում, ըստ երևույթին, պատճառ էին դարձել Հայաստանում Տիրիբազի իրավունքների ընդլայնմանը: Դրա մասին են վկայում կիլիկյան Իսսոս, Մալլոս և Տարսոն քաղաքներում նրա թողարկած սատրապական արծաթե դրամները:[27]

2. Կարծիքներ Երվանդունի արքայատոհմի ծագման մասին

Հայտնի է, որ Արտաշես 1-ինը իր սահմանաքարերի արձանագրություններում իրեն ŕwndqn (Երվանդական)[28], այսինքն՝ *Երվանդյան, Երվանդունի* է կոչում: Հայագիտության մեջ ճանաչում գտած կարծիքի համաձայն՝ նա իր գահակալմանը օրինական տեսք տալու համար է դա արել, որովհետև իբրև թե հոր կողմից (հայրական գծով) Երվանդունի չէր, այլ մոր կողմից: Այս տեսակետը պաշտպանած Գ. Սարգսյանը գրում է. «Արտաշեսը, ճիշտ է, Երվանդյաններից է սերվում, ինչպես ինքն է պնդում, բայց սեր-

[24] **Քսենոփոն -1970,** էջ 93:
[25] Նույն տեղում, էջ 94:
[26] **Дандамаев М. -1985,** էջեր 238-239.
[27] **Մուշեղյան Ս. -1983,** էջեր 18-21:
[28] **Периханян А. -1965,** 4, էջեր 108, 128:

վում էր նրանցից ոչ թե ուղիղ գծով, այլ կողմնակի՝ մոր միջնորդությամբ»:[29] Ուղիղ գծով Երվանդունի նա, հակառակ Մովսես Խորենացու, համարում էր Երվանդ Վերջինին՝ որպես օրինական իշխող արքայատոհմի վերջին ներկայացուցչի:[30] Ստրաբոնը որևէ խոսք չի ասում Օրոնտեսի օրինական կամ ոչ օրինական իշխող լինելու մասին, իսկ «վերջին իշխողը» վերաբերում է ոչ թե նրա՝ Երվանդունի արքայատոհմի վերջին ներկայացուցիչը լինելուն, այլ *վերջին թագավորը* լինելուն, որովհետև Ստրաբոնն անմիջապես շարունակում է. «Դրանից հետո Արտաշես և Զարեհ՝ հռովմայեցւոց հակառակորդ Անտիոքոս Մեծի զորավարները, երկուսի բաժանեցին երկիրը. առաջ իշխում էին թագավորի (իմա՛ Անտիոքոսի – Է.Պ.) հրամանի տակ…»[31]:

«Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական առաջին հրատարակության 1-ին հատորում կարդում ենք. «Ստրաբոնն իր հերթին Երվանդունիներին սերված էր համարում Դարեհ Ա-ի զինակիցներից մեկից՝ Հիդարնեսից»:[32] Բայց Ստրաբոնի խոսքը ոչ թե Երվանդունի արքայատոհմի, այլ Երվանդ Վերջին թագավորի մասին է, որին մեր Պատմահայրը մոր կողմից է նախկին արքայատոհմից սերած համարում:[33] Ըստ նրա՝ Երվանդ Վերջինի գահակալումը ապօրինի է եղել, մանավանդ որ Բագրատունի թագադիր չի ունեցել[34]: Հակառակ դեպքում ինչո՞ւ պետք է Արտաշես 1-ինը վերցներ իր կողմից ապօրինի համարված և իր զինվորների սպանած Երվանդ Վերջինի տոհմանունը: Ժամանակին նույնիսկ նրա *Երուանդ* անունը կրելու իրավունքն է կասկածի տակ դրվել: Խորենացու հավաստմամբ Երվանդ և Տիգրան անուններ կրելը հատուկ էր Հայկազանց տոհմի ներկայացուցիչներին, իսկ «զվերջին Երուանդ և զՏիգրան ի սոցանէ ըստ յուսոյ կոչեցեալ»[35] էին:

Երվանդ Վերջինի՝ Հյուդարնեսի շառավիղը լինելու մասին Ստրաբոնի հաղորդումը Ժ. Էլչիբեկյանը համադրում է մի կողմից Պլուտարքոսի բերած, իսկ մյուս կողմից Կոմմագենեի Նեմրութ լեռան սալաքարերից մեկին՝ Արտաքսերքսես 2-րդին վերաբերող հաղորդումների հետ: Դրանցից առաջինում Արտաքսերքսես 2-րդի պալատական բժիշկ Կտեսիասի հետևությամբ Պլուտարքոսը հաղորդում է, որ արքայազն Արշակը ամուսնացել էր Հյուդարնեսի դուստր Ստատեիրայի հետ և հետագայում վերանվանվել Արտաքսերքսես[36], իսկ երկրորդում ուղղակի ասվում է. «Արուանդեսին՝ որդուն Արտասուրայի, որ ամուսնացած էր թագուհի Հռոդոգունեի հետ՝ դստեր արքայից-արքա Մեծն Արտաքսերքսես Մնեմոնի»:[37] Այս համադրումներից ելնելով՝ Ժ.Էլչիբակյանը եզրակացնում է. «Այսպիսով, Ռոդոգունեի միջնորդությամբ, որը Հյուդարնեսի թոռն էր և Արտաքսերքսեսի աղջիկը, Օրոնտեսը ազգական է դառնում միաժամանակ և՛ Հյուդարնյաննե-

---

[29] **Սարգսյան Գ. -1966,** էջ 205: Տե՛ս նաև **Կրկյաշարյան Ս. -2005,** էջեր 57-58: **ՀԺՊ -1971,** հ. I, էջ 529:
[30] **Սարգսյան Գ. -1966,** էջ 204:
[31] **Ստրաբոն, 1940,** էջ 65:
[32] **Տիրացյան Գ. -1971,** I, էջ 504):
[33] **Խորենացի -1981,** Բ, լէ:
[34] Նույնը:
[35] **Խորենացի -1981,** Բ, լէ, Ա, իբ:
[36] **Плутарх -** http://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1439004500
[37] **Սարգսյան Գ. -1966,** էջ 30:

րին, և՛ Աքեմենյաններին։ Ուրեմն, Ստրաբոնի վկայությունն ու Կոմագենեի Նեմրութ լեռան արձանագրության վկայությունը լրացնում են միմյանց և ոչ թե հակասում»։[38] Այո՛, բայց սա Երվանդունիների տոհմաբանություն կլիներ, եթե նրանք իրենց տոհմական ժառանգության մեջ գերապատվությունը տային ոչ թե արական, այլ իգական արյունակցությանը. իսկ դա այդպես չէր։

Երվանդունիների ծագման վերաբերյալ առաջացած խառնաշփոթը փորձել է հստակեցնել Ս.Կրկյաշարյանը։ Իր տեսակետն այս հարցում նա ամփոփում է՝ գրելով, որ Երվանդունի/Հայկազանց «հարստությունն ընդհատվում է Աքեմենյանների տիրապետության ու Երվանդունիների թագավորության (շուրջ 320-190թթ.) ժամանակ։ Արտաշես Ա-ը, մեր կարծիքով, տապալելով Երվանդ Վերջինին, վերականգնում է VI դարի հայկական հարստությունը»։[39] Այստեղ ճշմարտությունը երկրորդ նախադասության մեջ է. Արտաշես 1-ինը, ապօրինի գահակալ համարված Երվանդ Վերջինին տապալելով, վերականգնել է *մ.թ.ա. 6-րդ դարից սկսած* հիշատակվող Երվանդունի արքայատոհմի օրինական իշխանությունը։ Ուրեմն օտար (հայրական գծով) ծագում ունեցել է ոչ թե Երվանդունի արքայատոհմը, այլ Երվանդ Վերջին թագավորը՝ հանձին իր նախնի՝ Հայոց քրմապետ Հյուդարնյան Տիրիբազի։

Եզրահանգում.

ա. Ստրաբոնի հաղորդումը Հայոց Երվանդ Վերջին թագավորի մասին՝ որպես «Հյուդարնեսի շառավղի», վերաբերում է նրա անձին, ո՛չ թե Երվանդունի արքայատոհմին։

բ. Այդ անձանց միջև եղած 200 տարվա անջրպետում Տիրիբազն է եղել հայրական գծով դրանց կապակցող հանգույցը։

գ. Տիրիբազը Քսենոփոնի «Անաբազիս»-ում հիշատակվում է որպես «Արևմտյան Արմենիա»-ի հյուպարքոս, բայց եղել է նաև Հայոց քրմապետ։

դ. Արին բերդից հայտնաբերված արծաթե պտյակի հեծյալի քանդակը Տիրիբազին է պատկերում։

ե. Մովսես Խորենացու վկայությամբ, Երվանդ Վերջինը մայրական գծով էր նախորդ արքայատոհմից (Արշակունի//Երվանդունի), իսկ Արտաշես 1-ինը՝ հայրական գծով։ Հակառակ պնդումները հիմնավոր չեն։

К ГЕНЕОЛОГИИ ЕРВАНДА ПОСЛЕДНЕГО

Петросян Л. С.

Ключевые слова: *Ервандиды, Оронтес, царь, Верховный жрец, бог Тир, Тирибаз, Гидарн, Ахемениды, армянский, персидский.*

Сообщение Страбона об армянском царе Ервандe Последнем, как «из рода Гидарна» касается только царя Ервандa, а не династии Ервандидов. В промежутке 200 лет между Гидарном и Ервандом Последним, соединяющим родословным звеном по отцовской линии

[38] **Էլչիբեկյան Ժ. -1971,** 2, էջ 112։
[39] **Կրկյաշարյան Ս. -2005,** էջ 59։

являлся Тирибаз. Тирибаз упоминается в «Анабасисе» Ксенофонта как гипарх (областеначальник, наместник) «Западной Армении» и близкий родственник Артаксеркса II: "когда он присутствовал, никто другой не сажал царя на коня". Это свидетельство того, что Тирибаз был персом высокого происхождения.

По нашему мнению он был также Верховным жрецом Армении. Скульптура всадника ахеменидского серебряного ритона из Арин-берда (Эребуни) изображает его. Головной убор всадника такой же, как и у воина из жреческого сословия телохранителей персидских царей - в отличие от воина, представляющего военное сословие. Этот головной убор одинаков также с головным убором персидского жреца. Ксенофонт, имея отношение к деятельности Тирибаза не в религиозных, а в официальных делах, не мог знать, что имя Тирибаза уже говорит о том, что он был жрецом, ибо *Тир* - первый компонент имени *Тирибаз* есть имя Бога-жреца Тир. Арташес I сверг Ерванда Последнего, считавшегося незаконным правителем Армении и восстановил законную власть Ервандидской (из Гайказунов) династии. Она упоминается в источниках с VI в. до нашей эры. Следовательно, из рода Гидарна (т. е. чужого, иностранного, персидского происхождения) была не династия Ервандидов, а царь Ерванд Последный в лице своего предка, Верховного жреца Армении Тирибаза.

Как свидетельствует Мовсес Хоренаци, Ерванд Последний был из предыдущей династии (у него Аршакиды//Ервандиды) не по отцовской, а по материнской линии, а Арташес I – наоборот, по отцовской линии. Утверждения об обратном необоснованы.

ON THE GENEOLOGY OF YERVAND THE LAST

Petrosyan L. S.

Key words: *Yervandids, Orontes, King, High priest, God Tir, Tiribaz, Hydarnes, Achaemenids, Armenian, Persian.*

Strabo's message about the Armenian king Yervand the Last, as from the "genus of Hydarnes" refers only to King Yervand, and not to the Yervandid dynasty. In the interval of 200 years between Hydarnes and Yervand, Tiribaz was the last ancestry link on the paternal side. Tiribaz is mentioned in Xenophon's "Anabasis" as a hiparchos (regional chief, viceroy) of "Western Armenia" and close relative of Artaxerxes II: "when he was present, no one else put the king on a horse." This witnesses the fact that Tiribaz was a Persian of high birth.

To our firm belief, he was also the High Priest of Armenia. The sculpture of rider on Achaemenid silver rhyton from Arin-berd (Erebuni) depicts him. The headdress of the rider is the same as that of a warrior from the priestly class of the bodyguards of the Persian kings, in contrast to the warrior representing the military class.

Xenophon, having relationship with Tiribaz not in religious, but in official affairs, could not know that the name Tiribaz conveyed the meaning of priest, because the first component of the name *Tiribaz* is the name of the God-priest *Tir*. Artashes I overthrew Yervand the Last (who was considered an illegal ruler) and restored the legal rule of the Yervandid (from the Haykazuns) dynasty, which is mentioned in the sources from the 6-th century BC. Consequently, from the Hydarnes genus (foreign, Persian origin) was not the Yervandid dynasty, but King Yervand the Last represented by his ancestor, the High Priest of Armenia Tiribaz.

According to Movses Khorenatsi, Yervand the Last was from the previous dynasty (Arshakids//Yervandids) not on the paternal, but on the maternal side and Artashes I, on the contrary, on the paternal side. Claims to the contrary are unfounded.

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. **Ագաթանգեղոս -1983, Ագաթանգեղայ** պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան, 1983:
2. **Էլչիբեկյան Ժ. -1971,** Երվանդունիների ծագման հարցի շուրջը // «Պատմա-բանասիրական հանդես», 1971:
3. **Իսրայելյան Մ. -1971,** Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն (ըստ արձանագրական ու հնագիտական տվյալների), Երևան:
4. **Խուրշուդյան Է. -1998,** Տոսպի արքա Միհրդատի դրամը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XVII, Երևան:
5. **Կրկյաշարյան Ս.-2005,** Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա.VI- մ.թ.IVդդ.), Երևան:
6. **ՀԺՊ -1971,** «Հայ ժողովրդի պատմություն», ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. I, Երևան:
7. **Հմայակյան Ս. -1990,** Վանի թագավորության պետական կրոնը, Երևան:
8. **Մանանդյան Հ.-1946,** Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան:
9. **Խորենացի -1981**, Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան:
10. **Մուշեղյան Խ.-1983,** Դրամական շրջանառությունը Հայաստանում. մ.թ.ա.Vդ.-մ.թ.XIVդ., Երևան:
11. **Պետրոսյան Ս.-2006,** Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, ՀՀ ԳԱԱ ՊԻ, «Մեսրոպ Աշճեան մատենաշար», 21, Երևան:
12. **Պետրոսյան Ս. -2020,** Հնագույն Տարոնի քրմության մասին // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 23, պրակ 2, Գյումրի:
13. **Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ.-2000,** Հովհաննես-Սմբատի թագավորության երեք բաղադրամասերի շուրջ // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. III, Գյումրի:
14. **Սարգսյան Գ.-1966,** Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան:
15. **Ստրաբոն -1940**, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան:
16. **Տիրացյան Գ.-1971,** Հայաստանը վաղ հելլենիզմի ժամանակաշրջանում // «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան:
17. **Տիրացյան Գ. -1958,** Երվանդունիները Հայաստանում // «Տեղեկագիր Հայաստանի ԳԱ (Հասարակական գիտություններ)», թիվ 6, Երևան:
18. **Քսենոփոն -1970,** Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան:
19. **Гамкрелидзе Т., Иванов В.-1984,** Индоевропейский язык и индоевропейцы, т. 2, Тб.5.Ереван.
20. **Дандамаев М.-1985**, Политическая история Ахеменидской державы. Москва.
21. **ДРС -1958,** «Древнегреческо-русский словарь», Составил И. Х. Дворецкий, т. 2, Москва.
22. **Периханян А.-1965,** Арамейская надпись из Зангезура (некоторые вопросы среднеирансиой диалектологии) // «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 4:
23. **Плутарх,** Сравнительные жизнеописания, Артаксеркс, http://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1439004500
24. **Страбон,** География, http://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1260110000

Ընդունվել է՝ 01. 09. 2022
Գրախոսվել է՝ 28. 09. 2022
Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի ասիստենտ, էլ. հասցե՝ vahe1996@mail.ru